



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ՏԱՌԻՇԵՑԻ

Կիրակոս Գանձակեցին յուր «Պատմութիւն Հայոց» գրքի առաջաբանում ժամանակագրական կարգով հիշելով մեր պատմագիրներին և համառոտակի նշելով նրանց գրական աշխատանքները, չի մոռանում նրանց շարքին դնել նաև իրեն ժամանակակից և յուր ուսուցիչ Վանական վարդապետին: Գանձակեցին այսպէս է որակում Վանական վարդապետին. «Եւ ապա մեծիմաստ և հանճարեղ վարդապետն անուանեալն Վանական, որոց փոյթ եղև սոցա իւրաքանչիւր սրբոցս գրով թողով զյիշատակ բարի, զկնի եկելոցս, յօգուտ խողացն և ի վարձատրութիւն նոցուն սրբոցն անշինջ լինել յիշատակ մինչ յօրն Քրիստոսի»^{*)}:

Այս հիշատակութիւնը, ինչպէս և Վանական վարդապետի հռչակավոր գործունեութիւնը հիմք են տալիս ընդունելու, որ նա թողել է խիստ արժեքավոր երկեր, որոնք դժբախտաբար չեն հասել մեզ: Հավանորեն նա գրել է իր ժամանակի 13-րդ դարի պատմութիւնը, մոնղոլների արշավանքը և այլն, որ անձամբ տեսել է և ժողովրդի հետ միասին կրել այդ արշավանքի կապակցութեամբ ստեղծված բոլոր հալածանքներն ու թշուառութիւնները:

Գանձակեցին, որ եղել է նրա աշակերտը և երկար տարիներ ապրել է նրա հետ, նրա կենսագրութիւնը չի տալիս, բավականանում է միայն հիշատակելով, որ Վանական անունով ակնանավոր վարդապետ ունենք:

Վասն վարդապետին Մխիթարայ, թէ ուստի՞ էր, և կամ ո՞րպիսի ոք՝ գլխում անում է Վանականի մասին առաջին հիշատակութիւնը, արձանագրելով Մխիթար Գոշի Վանականին աշակերտելու հանգամանքը:

«Հռչակաւորն այն և մեծիմաստն դիտու-

թեամբ էր ի քաղաքէն Գանձակայ, քրիստոնեայ ծնողաց զաւակ, որք ետուն զնա յուսումն Գրոց սրբոց. և իբրև եհաս նա յարբունս հասակի, ձեռնադրեցին զնա քահանայ կուսակրօն: Եւ պաշտեալ զքահանայութիւնն յոլով ամս՝ ցանկացաւ հմուտ լինել Գրոց սրբոց, և առակաց խորոց, որ կան ի նոսա: Եւ հանդիպեցաւ Յովանէս վարդապետի Տաւուշեցի անուանեալ, որ ի ժամանակին յայնմիկ երեւի էր նա գիտութեամբ. զառաջին յաշխարհակեաց կեանս կացեալ սակաւ ինչ, և մնացեալ յամուսնոյն, կրօնաւորութեան հետեւեալ. և հասու եղեալ Աստուածայնոց Գրոց զվարդապետական պատիւ ժառանգեալ: Առ սմա կացեալ Մխիթար ամս յոլովս, ուսման գրոց պարապեալ. և զի էր վարդապետն Յովանէս շրջակայ տեղւոյն ի տեղի շրջելով, քարոզելով զբանն Աստուծոյ և ուսուցանելով զբարի վարս մարդկան: Սա բազում իրս կարգաւորեաց կարգաց և կրօնից քրիստոնէից...» և այլն^{*)}:

Այնուհետև շարունակում է Գանձակեցին. «Կացեալ առ սմա Մխիթարայ, և առ այլ ոմանս, էառ նա զանուն վարդապետական. և այնու ոչ շատացաւ, այլ շոգաւ նա յԱրևմուտս կոյս յաշխարհն, որ կոչի Սեւիսն առ վարդապետսն, որք էին անդ ուսուցիչք. և զայն ինչ ոչ հանեալ ի վեր՝ թէ իցէ նորա առեալ զայն պատիւ, այլ բազում ինչ օգտեալ ի նոցանէ, եկն նա ի Կարնոյ քաղաք...»:

Վերահիշյալ մեջբերումը նշանակալից է և կարևոր մի քանի տեսակետից:

Նախ՝ մոնղոլների դաժան արշավանքների պայմաններում, երբ ամենուրեք սով էր առաջացել և դրա հետ միասին շարունակվում էին կողոպուտը, սոսկալի հարկահանութիւնը, տեղահանումներն ու կոտորածները, երբ կյանքի ապահովության ոչ մի նշույլ և փրկութեան ոչ մի հույս չէր

*) Պատմութիւն Հայոց արարեալ Կիրակոսի վարդապետի Գանձակեցւոյ, Մոսկվա 1858 յառաջաբան հեղինակին, էջ Գ. Դ.:

*) Նույն, էջ Գ. Դ.:

առկայծում, ահա այդ պայմաններում դրոշմում են մարդիկ և խմբակցություններ, որոնք համառ պայքարի գնով և անդորով լի կամքով առաջ են մղում հասարակական կյանքի կարևոր լծակներից մեկը՝ դպրոցն ու դպրությունը:

Այդպիսի անխոնջ, վաստակավոր մշակներից մեկն է հանդիսանում Վանական վարդապետը յուր աշակերտներով:

Այն փաստը, որ Մխիթար Գոշն իր վարդապետական կոչումն ստացել է Վանական վարդապետի դպրոցում, ինքնին առիթ է տալիս մտածելու, թե «Դատաստանագրքի» ակնազարտ հեղինակը՝ Գոշը մկրտվելով Վանական վարդապետի դպրոցում, նրանից և նույն դպրոցից չվերցրեց իր հետագա աշխատանքների ծրագիրն ու սկզբունքները:

«Սա բազում իրս կարգաւորեաց կարգաց և կրօնից քրիստոնեից», գրում է Վանականի մասին Գանձակեցին: Այս սողներն արդեն վկայում են, որ Վանականը խիստ պատրաստված և հասարակայնացած մարդ է եղել, որ նա ընդհանուրի կողմից ճանաչվել է որպես հեղինակություն և սրբակրոն անձ: Վանական վարդապետը կարողանում է կարգավորել այնպիսի խնդիրներ, որոնք կամ կաթողիկոսին են վերապահվում կամ Աղալային եկեղեցական ժողովին:

Ըստ Գանձակեցու Վանական վարդապետը նրգէվանից բերդի հանդեպ գտնվող Խորանաշատ վանքում է բնակություն հաստատում, բայց այս վանքը Զալալադին Սուլթանի ձեռքով ավերվում է, որից հետո Վանական վարդապետը նոր վանք է կառուցում Տավուշ բերդի հարավային կողմում, Ոլորուտն գյուղի դիմաց: Ահա թե ինչպես է նկարագրում այդ կառուցումը:

«Ընդ ժամանակսն ընդ այնոսիկ մեծ վարդապետն, որ կոչէր Վանական, իւրովք աշխատութեամբ փորեալ էր իւր քարայրս ի կատարս բարձրագոյն քարի միող, որ կայ հանդէպ գեղջն, որ Ոլորուտն կոչի, ի հարավոյ կողմանէ Տաւուշ բերդի և շինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ, և անդ դարձաւ գաղթութեամբ. իբրև ւանքեաց առաջին վանք նորա, որ կայ հանդէպ բերդին նրգէվանից, ի Զալալադին Սուլտանէն» *):

Ուշադրության արժանի կողմ է կազմում պատմագրի հիշատակությունը թե «Իւրովք»

աշխատութեամբ փորեալ էր իւր քարայրս... և շինեալ էր յայրի անդ եկեղեցի մի փոքրիկ» և այլն:

Վանականի շինարարությունը հետապնդել է լուրջ նպատակներ: Ահա այդ նպատակները. «Եւ անդ կայր գետեղեալ ժողովեալ Բազում գրեանս, զի յոյժ ուսումնասէր էր այրն, մանաւանդ թէ աստուածասէր և բազումք գային առ նա և ուսանէին գրանս վարդապետականս ի նմանէ»:

Պարզվում է, որ Վանական վարդապետն ունեցել է յուր դպրոցը բազմաթիվ աշակերտներով, որոնց ուսուցանել է ժամանակի գիտությունը և ապա տվել վարդապետական կոչում: Վանականը հաստատելով իր վանքը և այնտեղ դպրոց բանալով ձեռնարկում է սերունդ դաստիարակելու պատասխանատու գործին:

Այդ ժամանակաշրջանում կրթական գործը մեծ մասամբ գտնվում էր հոգեվորականության ձեռքում և կենտրոնացած էր վանքերում: Յուրաքանչյուր ուսումնասեր անձ, որ վարդապետական կոչում էր ըստանում, ձգտում էր հետևել իր ուսուցչի օրինակին եվ դպրոց կազմակերպելով սերունդ դաստիարակել: Վանական վարդապետի օրինակին է հետևում նրա աշակերտ հռչակավոր Մխիթար Գոշը: Նրա իմաստության համբավը տարածվել էր ամեն տեղ և նրա շուրջը համախմբվել էին շատ երիտասարդներ ուսում ստանալու նպատակով: «Եւ յետ այսորիկ դարձաւ նա յաշխարհ իւր և էլ համբաւ իմաստութեան նորա ընդ ամենայն աշխարհս և բազումք աշակերտէին նմա յուսումն վարդապետութեան» *):

Մխիթարը հաստատվում է Կային դավառում Աղստե գետի ափին շինված Գիտիկ վանքում. «Եւ բնակեցաւ նա ի վանքն, որ կոչիւր Գետիկ, ի դաւառին Կայենոյ, ի վերայ գետոյն մեծադունի, զոր անուանին Աղստեոյ գետ, յաջմէ կողմանէ գետոյն» **):

Ակնազարտ անձնավորություն է նաեվ Գիտիկ վանքի վանահայր Սարկավադ վարդապետը, որը աշակերտել է Մխիթարին և որը «բազում ուրախութեամբ ընկալաւ զնա, և ինքն սպասարբեր նմա» ***):

Սակայն Գիտիկ վանքը երկրաշարժից

*) Նույն, էջ 121:

**) Նույն, էջ 122:

***) Նույն, էջ 122:

*) Նույն, էջ 143:

կործանվում է և Մխիթարը նոր վանք է կառուցում Տանժուտա ձորում և այստեղ հիմնում յուր դպրոցը. «Բազումք էին, որք աշակերտեցան ի նմանէ վարդապետական բանին. քանզի համբաւ իմաստութեան նորա հռչակեցաւ ընդ ամենայն տեղիս և գային առ նա յամենայն կողմանց»^{*)}։

Կիրակոս Գանձակեցիին իր ժամանակակից և ուսուցիչ վանական վարդապետի մասին նույնպես գրում է և այսպես դրվատում նրան. «Այր սուրբ և պարկեշտ, յամենայն գործս բարիս յառաջադէմ, ողջխոհ և զգաստ յամենայնի և վարդապետական բանիւ քան զամենեսին, որ ի ժամանակին էին գերազանցեալ, ծննդական մտօք և յարմար բանիւք։ Վասն որոյ դեգերէին առ նա ուսման աղագաւ ոչ միայն վարդապետական բանի, այլ ամենայն կեանք նորա և շարժումն անգիր օրէնք էին տեսողացն։ Եւ զայս ոչ թէ միայն ականջալուր ասեմ, այլ և ականատեսն իսկ եմ, զի բազում ժամանակս կացաք առ նա ի վարժս կրթութեան ի սահմանս Տաւուշ բերդոյ, յանապատի անդ, զոր ստացաւ իւր բնակութիւն, և աղբիւրաբար արբուցանէր ամենեցուն զբանն վարդապետական»^{**)}։

Մխիթարի, վանական վարդապետի և Սեւեռի դպրոցները դաստիարակչական խոշոր աշխատանք են կատարում հայ եկեղեցու և հայկական կուլտուրայի պահպանման գործում։ Նրանք միաժամանակ պայքարում են հասարակական բարքերի այն այլասերման դեմ, որ ստեղծվել էր թաթարական արշավանքների հետեւանքով։ Թէ բարքերի անկումն ինչ սոսկալի շաիրի էր հասել, երեւում է Կոստանդին կաթողիկոսի շրջաբերական թղթից, որ նա Կիլիկիայից (Հոռմկլա) ուղարկում է Հայաստան Վարդան վարդապետի միջոցով։ Այս կապակցութեամբ Գանձակեցիին գրում է հետեւյալը.

«Կարգ ամուսնութեան սուրբ օրինացն բարձաւ, և հեթանոսօրէն արին ընդ արին խառնէին, զազգականն առնելով, և զոր կամէին թողութիւն, և զոր կամէին առնութիւն և պարկեշտութեան պահոց փոյթ ինչ ոչ առնէին. ընդ հեթանոս խառնակէին անխտիր. նաև որ մեծն է քան զամենայն շարիս, զի եպիսկոպոսք արծաթով առնէին ձեռնադրութիւն, զպարգևսն Աստուծոյ ա-

նարժանից ծախելով և զմանկունսն և զրտաքտնսն՝ որ ոչ մարթէին ուղղակի խօսել առաջի մարդկան, միջնորդ ընդ Աստուած և ընդ մարդիկ կացուցանէին. և անարժան քահանայք և պոռնկեալք և յայտնի բոզս նստուցեալ, առնէին քահանայազործութիւն և այլ բազում շարիս, զոր գործէին ի մեծամեծաց մինչև զփոքունս, ըստ այսմ թէ քահանայքն և ժողովուրդքն ի միասին յիմարեցան, և կշտամբիչ ոչ ոք։ Վասն այսր պատճառանաց փութացաւ գրել թուղթս շրջաբերականս և կանոնս համաշխարհականս»^{*)}։

Կոստանդին կաթողիկոսն իր շրջաբերականով արգելում է տգետ և անձեռնհաս մարդկանց հոգևոր կոչում տալը, նույնպես արգելում է կաշառքով կատարվող ձեռնադրութիւնները։ Սահմանում է լուրջ և հանդիսավոր վերաբերմունք ունենալ հոգեւոր ծեսերի կատարելիս և եկեղեցում ժամասացութիւնը պահել բարձր աստիճանի վրա։ Հատուկ ուշադրութիւն է հրավիրում պայքարել պոռնկութեան և ընտանեկան կապերը խախտողների դեմ։

Շրջաբերականը բերող վարդան վարդապետն ստորագրել է տալիս այն բոլոր թեմերի եպիսկոպոսներին, որոնք և խոստանում են կաթողիկոսի պատվիրանները սրբութեամբ կատարել։

Անշուշտ մի կամ նույնիսկ մի քանի շրջաբերականներով անհնար էր կանգնեցնել բարոյական կյանքի այդ անկումը. անհրաժեշտ էր հասարակական լուրջ պայքար։ Այդ պայքարի ղեկավարն է հանդիսանում վանական վարդապետն իր աշակերտներով և համախոհ եպիսկոպոսներով։

Այդ ժամանակ Գեղարքունյաց ծովի ափին Մար գյուղի շաղացպան Դավիթը, որին Գանձակեցիին վերակում է «Դավիթ մուրեցեցուցիչ» անունով, հայտարարում է, թէ Քրիստոս երեւացել է իրեն և հանձնարարել Քրիստոսի անունով բժշկութիւն կատարել։

Ռամիկ և տգետ ժողովուրդը շարժվում է դեպի Մար գյուղը. շաղացպանը դառնում է հրաշագործ սուրբ։ Գանձակեցիին գրում է. «Եւ այսպէս զամենեցուն միտս լինքն ձգէր մինչև այնքան լինէր առ նա ժողով բազմութեան, մինչև տեղիք վայրացն ոչ բաւէին տանել և զի ամառնային էր ժամանակն, ի մարդս և ի սարս ելեալ անդ ա-

*) Նույն, էջ 127։

**) Նույն, էջ 127—128։

*) Նույն, էջ 173—174։

զանէին և գործէին դամենայն շարիս. զի կանայք, որք ոչ իշխէին ի տան իւրեանց յարանցն և ի ծնողացն և յորդուցն շնալ և պոռնկիլ, ելանէին ուխտի պատճառաւ, և շնային համարձակ ընդ որս և կամէին: Նույնպէս և արքն շարք զնոյն առնէին, որոց ցանկային և գնային բազում պատարագօք՝ ոսկով և արծաթով և զուարակաւ և որք երթային և գային, զայնոսիկ՝ որք ոչ իշխէին երթալ, կշտամբէին և դարշէին ի նոցունց, որպէս ի մեղաւորաց և յանարժանից նորա տեսութեանն: Այլ և երիցունք եկին և յարեցան ի նա ինչից և զօշոտութեան աղագաւ և կային նմա ի սպասու, լուանալով զոտս նորա և զշուրս ցանէին ինքեանց վերայ, և ինքն կեղծաւորեալ ինչ որ առնոյր յումեքէ, այլ ի ձեռն քահանայիցն և արքանեկաց իւրոց առնոյր և տէր գեղջն, քանզի պարսիկ էր, առնոյր զրաժին իւր յընչիցն. քանզի յոյժ բազումս տանէին և յօժարութեամբ տային: Եւ թէ որ ի վարդապետաց կամ յերիցանց արգելոյր կամ խափանէր զնոսա յերթալոյ, հայհոյէին և բամբասէին իբրեւ զնախանձոտս և զշաշղկոտս, թէ ինքեանք ոչ կարեն գործել զգործս նորա և չկամին զբարեգործութիւն սրբոյն այնորիկ» *):

Սակայն շաղաքպան Դավթի դերը սրանով, չի սահմանափակվում, ինչպես Գանձակեցին է պատմում, նա ձգտում է հոգեվոր և քաղաքական բարձրագույն իշխանություն: Նա բարոզում է. «Թէ յԱրշակունեաց ազգէն եմ ես, և պարտ է որդւոց Դիոց լինել միոյն թագաւոր և միւսոյն կաթողիկոս և սրբոյն Սահակայ տեպեանն մարթ է ի վերայ նոցա կատարել» **):

Ջաղացպանի հանդիսությունն, այն աստիճանի է հասնում, որ նա մի մեծ ծառից խաչ է կանգնեցնում, նրանից ստացած խեժը որպէս սրբություն բաժանում:

Այս հանդուգն ավագակի և խաբեբայի դեմ է, որ իր բռնուցքն է բարձրացնում վանական վարդապետը և ընդհանուր պայքար կազմակերպում նրա դեմ:

«Ապա գիր սաստից և մեղադրանաց գրեաց մեծ վարդապետն վանական, որ բռնակէր ի վանս Խորանաշատոյ՝ հանդէպ երգէվանից բերդին և բանատրեաց զայնոսիկ, որ ի պիղծ մսոյ անտի կերեալ էին և

կամ ունէին նշխար ի տաշխէն և ի կորեկոյն» *):

Վանականի օրինակին են հետեւում և ուրիշները: «Գրեցաք և մեք նմանապէս նովին սաստիւ և բանադրանօք և առաքեցաք ի յովով տեղիս», ասում է ինքն իր մասին Գանձակեցին: «Նոյնպէս գրեաց և եպիսկոպոսն Հաղբատայ տէր Համազասպ» «եկն և Թաթի վանից եպիսկոպոսն տէր Գրիգորէս և վարդապետն Վարդան, զոր Յօժար որդին կոչէին, բազում քահանայութիւն գիւղն յայն, քանզի ի նոցա վիճակին էր»:

Վերջապէս ընդհանուր ուժերով ջաղացպանի մթին որջը քանդում են և տակն ու վրա անում: Ջաղացպանը խոստանում է վերջ դնել իր մոլորություններին. միայն այդ պայմանով ազատ է արձակվում:

Թերեւս կարիք չիներ այսքան երկար կանգ առնել այս դեպքի վրա, եթէ անհրաժեշտ չհամարվեր բնորոշել 13-րդ դարի հայ հասարակության հասունության մակարդակը մի կողմից և մյուս կողմից: Թե ինչպիսի մոլորություն կարող է սերմանալ բաղդախնդիր մեկը, եթե եկեղեցին և նրա ղեկավարները իրենց դերում և տեղում չլինեին:

Վանական վարդապետի գործունեությունը ծավալուն ընթացք է ստանում թաթարների արշավանքի ժամանակ: Ահա այդ միջոցին է, որ նա հրապարակ է հանում իր ողջ նվիրվածությունը հայրենիքին և ժողովրդին շինայելով իր անձը, պատրաստ զոհաբերվելու հանուն իր սիրած ժողովրդի և հասարակության:

Երբ թաթարները մոլեգնաբար սկսում են իրենց դաժան արշավանքը, Տավուշի շրջանի ազգաբնակիւթյունը ապաստանում է վանականի վանքում, որպէս ժայռերի ծերպերում շինված ամուր տեղ և որպէս անտիկ ամրոց: Վանականը սիրով ընդունում է նրանց և հյուրընկալում: Սակայն թաթարները շրջապատում են վանքը և պահանջում անձնատուր լինել:

Ժողովուրդն ասում է նեղվել, մանավանդ խմելու ջուր չունենալու պատճառով:

Եվ ահա դիմում են Վանականին այս խոսքերով. «Գնեա՛ զարիւն մեր թմենեցուն, և է՛ջ առ նոսա, և արա՛ սէր ընդ նոսա»:

«Ես զանձն իմ ոչ խնայեցից վասն ձեր, թէ գոյ հնար փրկութեան» **), պատասխանում:

*) Նույն, էջ 194.

**) Նույն, էջ 195.

*) Նույն, էջ 194.

**) Նույն, էջ 143:

նում է վանականը և ցած է իջնում վան-
քից թաթարների հետ բանակցելու համար:
Բանակցության արդյունքն այն է լինում,
որ թաթարները ժողովրդին չեն կոտորում,
այլ նրանց ունեցվածքը հափշտակում են և
ժողովրդին գերեվարում են: Գերեվարվող-
ների մեջ էր նաև մեր պատմագիրը, Կի-
րակոս Գանձակեցին, որ այդ ժամանակ
աշակերտում էր վանականին:

Ծանապարհին ժողովուրդը սոսկալի նե-
ղություններ և զրկանքներ է կրում: Վանա-
կանն իր ներկայությամբ ոգեվորում է նը-
րանց, փրկության հուս ներշնչելով յուրա-
քանյուրին: Բայց խորամանկ թաթարները
վանականին պահում են մեկուսացած վի-
ճակում: «Սև զվարդապետն ոչ թողին առ
մեզ, այլ ուրույն, հեռի ի մէջ յայլս ոմանս
յանձնիցին զգուշութեամբ պահել»^{*)}: Թա-
թարները Գանձակեցուն վերցնում են իրենց
մոտ որպես թարգման-գրագետ. «ապա
առին և զիս յընկերաց իմոց զկնի իւրեանց
ի պէտս զպրութեան գրել թուղթ և ընթեռ-
նուլ»:

Վերջապես վանականը խնդրում է գերե-
վարողին ազատել իրենց: Վերջինս փրկանք
է պահանջում: Վանականը հայտնում է, որ
շրջակայքում ապրող քրիստոնյաները
կգնեն իրենց: Մարդիկ են ուղարկում Գագ

բերդը փրկանք տալու համար, բերդի բնա-
կիչները տալիս են փրկանքը և գերիներին
ազատում: Սակայն Գանձակեցուն թաթար-
ները պահում են, չեն ազատում, հայտնե-
լով՝ թէ «սա պետք է մեզ թուղթ գրելոյ և
ընթերցման, թէպետ բազում գինս տայր,
ոչ տամք զսա»^{*)}:

Թաթարների զորապետ Սուլարը պատ-
վիրում է զգուշությամբ պահել Գանձակե-
ցուն: Բայց Գանձակեցին հենց նույն գի-
շերը փախչում է և ապաստանում Գետիկ
վանքում, որ ավերակ էր արդեն:

Վանականի գործունեությունը պսակ-
վում է նրանով, որ նա իր զպրոցով և իր
աշակերտներով կարողանում է փրկել ժո-
ղովրդին այն ընդհանուր քայքայվածու-
թյանից և բարոյական անկումից, որ
ստեղծվել էր թաթարների արշավանքե-
րի հետևանքով:

Հայրենասեր և անձնուրաց վարդապետը
իր ժամանակի մոռյալ պայմաններում դաս-
տիարակում է բուն հայրենասիրությամբ
զինված բազմաթիվ աշակերտներ, հանձին
Մխիթար Գոշի և Կիրակոս Գանձակեցու,
որոնք շարունակում են իրենց ուսուցչի
հայրենասիրական գործը և հայ գրականու-
թյան պատմության մեջ փայլում որպես
13-րդ դարի գրական աշխատող դեմքեր:

ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ

*) նույն, էջ 174.

**) նույն, էջ 146.

*) նույն, էջ 174:

